Հաշվետվություն

2025 թվականի դեկտեմբերի 2-ից 4-ը Բելգիայի Թագավորություն, (Բրյուսել) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Սուրեն Թովմասյան, Կադաստրի կոմիտեի ղեկավար

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Բելգիայի Թագավորություն, Բրյուսել, 2025 թվականի դեկտեմբերի 2-ից 4-ը

3. **Հրավիրող կողմը.**
   «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիա

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն Եվրոգեոգրաֆիքս ասոցիացիայի կառավարման խորհրդի հերթական նիստին

5. **Քննարկված թեմաները.**
   - «Բաց (հասանելի) քարտեզներ Եվրոպայի համար 2» (OME2) ծրագրի գործառնական թարմացում՝ ներառյալ հիմնական կատարողական ցուցանիշներ (KPIs),
   - Վերանայված ռիսկերի գրանցամատյան,
   - Ասոցիացիայի ֆինանսական հաշվետվության ներկայացում և տարեվերջյան կանխատեսում,
   - 2026 թվականի բյուջեի նախագիծ,
   - Ներկայացուցչական աշխատաժողով,
   - Անդամակցության ռազմավարություն (դիտորդ անդամներ, անդամների հանդիպումներից ստացված արձագանքներ, մոդելային և անհատական բաժանորդագրություններ, որոնց վերաբերյալ քվեարկությունը կանցկացվի 2026 թվականի Գլխավոր ասամբլեայի նիստում),
   - 2027 թվականի գլխավոր ասամբլեան անցկացնելու վերաբերյալ առաջարկների վերանայում և ընդունող կազմակերպության վերաբերյալ որոշում,
   - Ասոցիացիայի կառավարման խորհրդի և ՄԱԿ-ի երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման փորձագետների (UN-GGIM) միջև համատեղ նիստ:

6. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**

Կառավարման խորհրդի նիստը մեկնարկեց ասոցիացիայի նախագահի ողջույնով և օրակարգի ընդունմամբ: Խորհրդի անդամների ուշադրությունը հրավիրվեց չկատարված ընթացիկ գործողությունների վրա: Առաջարկվեց վերանայել 2025 թվականի հիմնական կատարողական ցուցանիշների (KPIs) առաջընթացը, այնուհետև արձանագրվեց, որ նոր գործառնական պլանը կհաստատվի 2026 թվականի մայիսին կայանալիք Գլխավոր ասամբլեայի ընթացքում: Անդրադարձ կատարվեց «Բաց քարտեզներ Եվրոպայի համար» (OME2) ծրագրի առաջընթացին և կարգավիճակին, ասոցիացիայի ռազմավարական ռիսկերին, ասոցիացիայի ֆինանսական վիճակին 2025 թվականի հոկտեմբերի վերջի դրությամբ:

Աշխատաժողովի ընթացքում կարևորվեց Եվրոպայի ազգային քարտեզագրման, կադաստրային և հողերի գրանցման մարմինների անդամակցությունը ասոցիացիային, վերջինից ստացված օգուտները, անդամների նպատակների իրականացման համար ասոցիացիայի աջակցությունը, ինչպես նաև գիտելիքների փոխանակման ուղղությամբ իրականացված լայնածավալ ծրագրերը, ովքեր կիսում են համաեվրոպական աշխարհագրական տվյալների օգտագործման նպատակը՝ ի օգուտ հասարակության:

Երկրորդ օրը կայացավ ՄԱԿ-ի երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման փորձագետների (UN-GGIM) հետ համատեղ հանդիպումը, որին բացի կառավարման խորհրդի անդամներից ներկա էին ինչպես մի շարք պետությունների, այնպես էլ ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի ներկայացուցիչները: Անցկացվեցին խմբային քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցները շեշտեցին երկրատարածական տվյալների հետագա զարգացման համար ֆինանսական աջակցության տրամադրման կարևորությունը: Մասնակից բոլոր պետությունները հաստատեցին երկրատարածական տվյալների դերը տնտեսության զարգացման գործում, ինչի կապակցությամբ առաջարկվեց պետական մակարդակով խրախուսել տարածական տվյալների ոլորտի զարգացմանն ուղղված քայլերը: ՄԱԿ-ի վիճակագրության բաժինը ընգծեց, որ տարածական տվյալների ճշգրտման արդյունքում կբարձրացվի հետագա վերլուծական տվյալների ճշտությունը:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

- Կառավարման խորհրդի նիստի ընթացքում որոշվեց հերթական գլխավոր ասամբլեան անցկացնել 2026 թվականի մայիսի 17-ից 19-ը Բելգիայի Թագավորությունում:
- 2026 թվականի մարտի 18-ին անցկացնել առցանց հանդիպում 2025 թվականի գործառնական պլանի և բյուջեի, ինչպես նաև գլխավոր ասամբլեայի փաստաթղթերի հաստատման վերաբերյալ:
- 2026 թվականի հուլիսի 1-ից 2-ը Բրյուսելում անցկացնել կառավարման խորհրդի անդամների հանդիպում, որի ընթացքում կքննարկվեն պլանավորման և ռազմավարության հարցեր:
- 2026 թվականի հոկտեմբերի 8-ին անցկացնել առցանց հանդիպում ասոցիացիայի ընթացիկ հարցերը քննարկելու համար:
- 2026 թվականի դեկտեմբերի 1-ից 3-ը անցկացնել կառավարման խորհրդի անդամների հանդիպում ՄԱԿ-ի երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման փորձագետների (UN-GGIM) հետ համատեղ:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Երկօրյա միջոցառման շրջանակներում առանձին հանդիպումներ եմ ունեցել տարբեր երկրների ներկայացուցիչների հետ: Կիպրոսի ներկայացուցչի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, նախանշվել են նոր հեռանկարներ՝ համագործակցության ընդլայնման նպատակով: Առաջարկվել է, որպեսզի կառավարման խորհրդի անդամները հետամուտ լինեն ասոցիացիայի շրջանակներում իրականացվող աշխատանքներին անդամ պետությունների ներգրավվածության բարձրացմանը և մասնագիտական համայնքների միջև համագործակցության խթանմանը:

9.Ստորագրությունը, ամսաթիվը:

Սուրեն Թովմասյան 05.12.2025 թ.

Հավելված N 2 ՀՀ վարչապետի N 326-Ն որոշման

Հավելված N 3 ՀՀ վարչապետի N 1230-Ն որոշման

Հաշվետվություն

Գործուղման ծախսերի վերջնահաշվարկի մասին

1 Մարմնի անվանումը Կադաստրի կոմիտե

2 Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ Վարչապետի Որոշում 13.11.2025թ. N 1038-Ա

3 Անուն, Ազգանուն, զբաղեցրած պաշտոն Սուրեն Թովմասյան Կադաստրի կոմիտեի ղեկավար

4 Գործուղման վայրը Բելգիայի Թագավորություն, քաղաք Բրյուսել

5 Գործուղման ժամկետները 02.12.2025-04.12.2025թթ.

6 Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը(Կադաստրի կոմիտեի 2025 թվականի ծախսերի նախահաշիվ)

(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

1. ճանապարհածախս, 2. գիշերավարձ, 3. օրապահիկ

ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)
		Սուրեն Թովմասյան	
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը էկոնոմ դաս		
	Ավիաճառայության արժեք (դրամ)	389,414.00	389.4
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) ԵՎՐ	206.0	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	90,716.22	
	Օրերի քանակ	2	
	Ընդամենը (դրամ)	181,432.44	181.4
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) ԵՎՐ	126	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	55,486.6	
	Օրերի քանակ	3	
	Ընդամենը (դրամ)	166,459.9	166.5
Այլ ծախսեր	Ապահովագրական ծառայություն		-
Ընդամենը ծախսեր (դրամ)			737.3

Գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյան

Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ/
գլխավոր հաշվապահ Գևորգ Սարդարյան

05.12.2025թ.